տարբերութիւնը: Հարկաւ ոչ նրանով, թէ այդ թիւն էլ ներկայացնում էին թաթարներից, վրացիներից եւ հայերից դուրս գտնուող անդրկովկասեան միւս՝ մանր ժողովուրդները, քանի որ Հաքստհաուզէն որոշակի ասում է՝ սրանք եւս մտնում են յիշատակուած երեք թուերի մէջ: Ուրեմն վերջիններս ոչ թէ Անդրկովկասի երեք գլխաւոր ժողովուրդներին են վերաբերում, այլ՝ դրանց երկրամասերում ապրող բոլոր ժողովուրդներին անխտիր:

Ամէն պարագայի տակ, թէեւ Հաքստհաուզէն մի քանի անգամ բացորոշ կերպով սակաւ վստահելի է անուանում ռուս վիճակագրական տեղեկութիւնները — մինչեւ վերջն էլ նրանք այդպէս մնացին, եթէ չհաշուենք 1897-ի՝ առաջին եւ վերջին՝ գիտական վիճակագրութիւնը,— ո՞րն է, այնուամենայնիւ, բաղդատաբար աւելի հաւանականը Անդրկովկասի ողջ ազգաբնակութեան մասին առաջ բերուած վերոյիշեալ թուերից: Այդ թուերն են, ինչպէս տեսանք, 2,150,000, 1,550,000, 1,500,000 եւ 1,400,000:

Գրեթէ որոշ պէտք է համարել, որ այս վերջին երեք թուերը աւելի ճիշտ են ճշմարտութեան, քան առաջինը, մանաւանդ որ շատ էլ մեծ չէ նրանց միջեւ եղած տարբերութիւնը — 50 հազար (1,550,000–1,500,000) եւ կամ 150 հազար (1,550,000–1,400,000): Այդ տարբերութիւնը դուցէ թէ կարելի լինի մասամբ նրանով բացատրել, որ 1,400,000 թիւը, ինչպէս որոշակի յիշատակում է, վերաբերում է 1838 թուականի վիճակագրութեան, իսկ 1,550,000-ը, ըստ երեւոյթին, 1843-ի վիճակագրութեան, այսինքն՝ այն տարուն, երբ Հաքստհաուզէն Անդրկովկաս է ճամբորդել: Դուցէ մինչեւ իսկ յետագայ տարիներին է վերաբերում նոյն այդ թիւը, քանի որ, ինչպէս սկզբին յիշեցի, Հաքստհաուզէնի գիրքը լոյս է տեսել բաւական ուշ, 1856-ին միայն:

Ենթադրել կարելի է ուրեմն, որ Հաքստհաուզէն 1843-ից յետոյ էլ կարող էր վիճակագրական տեղեկութիւններ ստացած լինել Անդրկովկասի մասին, ինչպէս որ նա Արովեանից եւս յետոյ տեղեկութիւններ էր առել նամակով:

Վերջապէս, քանի որ Հաքստհաուզէնի վկայութեամբ Koeppen-ը «լաւագոյն ռուս վիճակագրողն» է եղել այն ժամանակները, ապա ուրեմն աւելի վստահելի պիտի համարել նրա տուած թուական տեղեկութիւնը Անդրկովկասի բնակչութեան մասին (1838 թուականի վերաբերեալ):

Տեսանք որ, Koeppen Անդրկովկասի աբական բնակիչների թիւը հաշուում է 679,497: Եթէ մի այդչափ էլ հաշուենք իգական սեռին պատկանողների թիւը, ապա ուրեմն դուրս կը գայ, որ — ըստ լաւագոյն ռուս վիճակագրող Koeppen-ի Անդրկովկասը 1838 թուականին ունեցել է 1,358,994 եւ կամ, ինչպէս Հաքստհաուզէնն է կլորացնում, մօտ 1,400,000 բնակիչ:

Այստեղ չենք կարող աւելի հանգամանօրէն կանգ առնել վիճակագրական տեղեկութիւնների վրայ, քանի որ ուսումնասիրութիւն չէ այս յօդուածի նպատակը, այլ միայն նիւթեր հաղորդելը նրա համար: Ուսումնասիրականը յատուկ աշխատանքի գործ է արդէն՝ ժամանակակից ուրիշ աղբիւրներ եւս օգտագործելով ու նրանց տուեալները իրար հետ համեմատելով վերջնապէս — հարկաւ մօտաւոր հաշուով — պարզել Անդրկովկասի բնակչութեան ստուգուած վիճակագրութիւնը յիշեալ թուականներին:

Ցամենայն դէպս ճշմարտութիւնից հեռու կանգնած չենք լինի, եթէ մենք էլ Koeppen-ին հետեւելով Անդրկովկասի ողջ բնակչութեան թիւը 1838 թուականին 1,358,994 հաշուենք (ընդունելով, որ իգական սեռին պատկանողների թիւը ոչ աւելի, ոչ էլ պակաս է եղել արականներից, այլ՝ հաւասար):

* * *

Նոյն Koeppen-ը մանրամասնելով Անդրկովկասի բնակչութեանը յատկացուած վերոյիշեալ թիւը (Հաքստ. Բ. 98), ասում է՝ դրանից եղել են.— վրացական ցեղին պատկանողներ՝ 182,431 արական բնակիչներ, թաթար ցեղին պատկանող արականներ՝ 319,-230, իսկ հայ ցեղին պատկանող արականներ՝ 147,303:

Յատկապէս չեշտուում է, որ (վրացական ցեղին պատկանող) մինգրելները, սվանէթները, դուրիացիները եւայլն չեն հաշուուած մէջը:

Արդ՝ եթէ նորէն ընդունենք որ իգական